

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.


ԱՐՏԱՍՈՒՇՄԱՆ

Երկու քիւրմիկ ծառով
Տարեկան 14 Ֆր.
Վեցամսեայ 7 Ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵՐԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆՔ

ԼՐԱՏՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 27 1906-ՎՈՌՆԻ

ԿԸ ՀՐԱՏՆԵՐԱԿՈՒԻ ՍՄԵՆ ՉՈՐԻՔԵՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du Journal

«ravounk»

VARNA (En partie

Редакция

на ВѢСТНИКЪ

«р вунк»

ВАРНА

Գրութիւնք եւ չին
րոշիր

Ծախցման տողը
20 սանթիմ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ շաբթու հրատարակած էինք՝ Վառնայի քաղաքացետութեան Սէպտ. 7 թուական և 11045 թուահամար ծանուցման համաձայն՝ թէ բոլոր թրքահայտակ գաղթական երիտասարդները որոնք 18էն 25 տարեկան են երթան արձանագրուին զինուորական տոմարին մէջ. մինչև հոկտ. 10 շարժանագրուողները իբրև զինուորականներ փախտականներ պատժու կենթարկուին:

Քաղաքացետութեան ծանուցումը շատ բացարդ էր թէ բոլոր թրքահայտակ երիտասարդներ զինուորական տոմարին մէջ արձանագրուելու են: Մենք այս պաշտօնական ծանուցման արձագանք եղանք ի մեծ ցաւ զինուորականներ խոյս տալ ուզող մեր ազգակիցներուն:

Օտար պետութեան մը հպատակներուն վրայ զինուորական պարտք ծանուցելը լուրջ դժուար էր, որ կրնար երկու կողմէ վարութիւններու միջև դիւանագիտական կնճիւռ յարուցանել. ինչ որ արդէն տեղւոյ թուրքիոյ ներկայացուցիչն ար իմացանք թէ, տեղեկագրած է Սօփիայի թրքական գումարտին: Մէկ կողմէ օրէ օր սպասելով երկու կողմէ վարութիւններու մէջ վէճի մը ծագումին կամ կարգադրութեան լուրին, մենք միւս կողմէ երկու կողմի օր հարկ դատեցինք անձամբ ներկայանալ քաղաքացետարանի զինուորագրական ճիւղի պաշտօնէին և բացատրութիւն ուղղել այդ ծանուցման մասին, խնդրելով բարձրագոյն հրամանագրին պատճէնը: Պաշտօնեան չլիորեցաւ... Մենք աւելցուցինք թէ մեր առած տեղեկութեանց նայելով ձեր ծանուցումը բարձրագոյն հրամանին համապատասխան չէ՝ դուք սխալ ծանուցած էք: Չը կրցաւ հերքել այս «սխալ» բառը, և մեղմօրէն մեր հետաքրքրութիւնը գոհացնելու համար փութաց յայտարարել թէ

թրքահայտակ լինելուն ի հաստատութիւն վաւերագիր չունեցողները միայն կրնանք զինուորագրել. իսկ որոնք որ ունին իրենց հպատակութեան տօգուանները ազատ են զինուորագրութենէ:

Մեր փնտռած պատասխանն ալ արդէն այս լրջալով, հեռացանք այդ պաշտօնեայի ներկայութենէն որ բուն պատճառն եղած էր ազգայնական կամ յետին մտքով քաղաքացետին ու քարտուղարին ալ սխալ ծանուցում մը ստորագրելուն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԺՈՂՈՎՐ

Տեղւոյ թաղ. Խորհրդոյ հրաւերին համաձայն, կիրակի օր ժամը 2էն յետոյ, Ազգ. վարժարանի մէջ հաւաքուած 200ի մօտ ազգայիններ առիթը ունեցան լսելու կաթողիկոսական Նուիրակ Տէր Տաճատ վարդապետի Պէտք է հոս անմիջապէս ըսել թէ ներկայիս մեծ ժառանգ վերջին գաղթականութեան պատկանող երիտասարդներ էին. իսկ Վառնայի հայ հաւատարմութեան գիւղի տէր, լուրջ և ձեռնհաս դասերէն անհատներ հոս անշան թիւ մը միայն կը կազմէին:

ԿԱԼՈՒԱՆՆԵՐՈՒ ԳՐԱԽՈՒՄԸ

Նուիրակ հայր սուրբ հարկ դատեց նախ պատմել համառօտակի կողմանի մէջ ուս պահպանողական կառավարութեան Հայոց եկեղեցական կալուածները գրուելու պարագաները ու գէպքերը: Խորին Գերապատուութիւնը ըսաւ, թէ Գանձէլիի եւ Կալիքիի ամուստանութեան վրայ թէ հայ եկեղեցական կալուածներու հատկութիւնը յեզափոխութեան կը յատկացուին. Բօրիէ գոնօսէլը, Բիլէլէն, մայր կայսրուհին եւ ուրիշներ համոզեցին Չարը որ ստորագրէ կալուածներու գրաւման հրովարտակը, վստահեցնելով զինք թէ հայ ժողովուրդը լուծութեամբ պիտի համակերպի այդ գրաւման Պատմեց հայ ժողովուրդի յազմը, ցոյցերը. Կաթողիկոսին մտային ընկճումով մը պահ մը էջմիածնէ հեռանալը. Ալէքսանդրաքով վերագրաւ, կատարուած փառաբեր ընդունելութիւնը, հայ ժողովուրդին «Վեհափառ» կալուածները չպիտի յանձնես» գոռում գոչումը եւ վերջապէս Ս. Օծուծեան վճռական որոշումը չը յանձնելու համար. Սինօքի անդամներուն տկարանալը, բայց միայն թեան չը յանձնելու կողմը լինելը. յիշեց, ահագին թափուով մինչև էջմիածին գալ եւ կալուածներու պահպանումը պահանջելու. Եւ նկարագրեց այն տխուր օրը երբ ուս պաշտօնաւորները ու սպաններ խաղաղութեան եւ զօրաց գնդերու ընկերակցութեամբ, եկան պաշարեցին էջմիածինը. պատմեց մանրամասնաբար այդ պաշտօնատարներու կաթողիկոսին ներկայանալը եւ փոխանակուած խօսքերը, որոնց եզրակացութիւնը եղած էր Հայրապետին մերժումը, թէ չէ կարող բանալիները յանձնել, քանի որ կայսեր հաւատարմութեան երդում ընելէ առաջ Հայ եկեղեցւոյն պահպանման համար երդուած է: Յիշեց Գանձէլիի երկակիսայ գնդերուն խորապետը, կղպաններու փախչախուժը եւ այլն. որոնց միջոցին բարեբաղդաբար հայ երիտասարդութիւնը խոհեմութիւնը ունեցած էր բնաւ մէջտեղ չերեւնալ, վախճալով թէ պատճառ կը տրուի էջմիածինը քարուքանդ ընելու:

ԿԵՒՐ. ԺՈՂՈՎՐ

Հայր սուրբ թուեց կեցր. ժողովը հրաւիրելու հարկադրող պատճառները, որոնց առաջինը դպրոցական խնդիրն էր զոր առանձին լուծելու համար կաթողիկոսին, ըլլալով կարգադրութիւնները անհետեւանք մնացին, այդ առիթը կոնգրակը պայքարի ենթարկուեցաւ, ճիւղաւորի ուսանողները ըմբոստացան, ցոյցեր կատարուեցան շատ մը կրթական հաստատութիւններու կողմէ. (անշուշտ այս բոլորի մէջ յեզափոխական կազմակերպութիւններ մատուցեցին): Բացատրեց եւ օրինակներով ցոյց տուաւ թէ Խաւհայոց վանքերու կալուածները բնաւ օգուտ չեն բերիր ժողովուրդական կուլտուրական եւ բարենպաստակ հաստատութիւններուն, այլ միայն վանահայրերու եւ հոգաբարձուներու քսակները եւ փոքրը պարարտացնելու կը ծառայեն ու խոպան կը մնան շատ տեղեր. հետեւաբար վարչական եւ կալուածական խնդիրներն ալ հիմնական լուծումի կը կարողանան: Այս պատճառներով մամուլը պահանջ կը դնէր, ըսաւ հայր սուրբը, որ հանրային հաստատութիւններու վարչութիւնը ու մատակարարութիւնը ժողովուրդին յանձնուի, այսինքն ժողովուրդի ընտրեալներուն:

Կաթողիկոսական նուիրակը այս բացատրութիւններով արդարացուց մայր 10ին տրուած կոնգրակը եւ անոր յաջորդող երկու կոնգրակները, որոնց հիման վրայ գումարուեցաւ էջմիածին

կեցր. ժողովը Այս պատմութիւնները ըրած առին հայր սուրբը դրուատեց Նոր Դարը իբրեւ որոշ եւ զուտ ազգային ուղղութեան հետեւող օտկան մը, որ բողոքած էր ու կը բողոքէր էջմիածինի եւ վանքերու կալուածներու մատակարարութեան եւ վարչութեան մէջ կատարուող զեղծումներուն դէմ. բայց միեւնոյն Նոր Դարը վերջին անգամ ամենաբուռն կերպով թէ՛ այդ կոնգրակներուն եւ թէ՛ կեցր. ժողովին դէմ էր. մինչդեռ հայր սուրբը կարգ մը բացատրութիւններով կարգաբացէ թէ կոնգրակները եւ թէ կեցր. ժողովոյ մեծամասնութիւնը որ Դաշնակցականներէ կը բաղկանար, ի՞նչու այս հակասութիւնը, Հոս խօսքը քիչ մը մենք Նոր-Դարին տանք:

«Հայոց ազգի եւ ազգային եկեղեցու գերագոյն շահերի եւ դրանց սպառնացող վտանգի խորին գիտակցութիւնը հրամայում է մեզ հրապարակով յայտնելու, որ մայրսեան եւ յունիսեան ծանօթ կոնգրակները հայրապետական կոնգրակներ չեն:

«Մենք հրապարակում ենք հաւատալու, որ հայոց ազգային «սահմանադրութիւն» շնորհող կոնգրակները Վեհ գործը լինի, նրա մտքի եւ կամքի արդիւնքը:

«Մենք չենք հաւատում այդ բանին, ոչ թէ նրա համար որ «սահմանադրութիւն» տալու մտադրութեան մասին կանխաւ հայ ժողովուրդին ոչ մի բան յայտնի չէ եղել, յայտնի չէ եղել եւ ոչ ինտելիգենցիային, այլապէս առաջադր հայ հասարակութեան, յայտնի չէ եղել նշանակաւ. էջմիածինի միաբանութեան, եպիսկոպոսներին, տաղանդաւորներին, այլապէս պէտք է որ այդ մասին կանխաւ խորհրդակցութիւն, մտքերի, կարծիքների չփոխաւ տեղի ունեցած լինէր:

«Այս հանգամանքը ցոյց է տալիս թէ էջմիածինը ում ձեռքն է ընկել: Չենք հաւատում եւ... ոչ թէ նրա համար, որ այդ գործը կատարուել է ծածուկ, գաղտնագողի եւ այդ այն աստիճանի, որ այդ գործը յօրինողները ստիպուած են եղել հետզհետէ իւր լեզուով, ձեռով տարօրինակ լրացուցիչ կոնգրակներով «սահմանադրութիւն» լրացնել:

«Չենք հաւատում եւ ոչ թէ նրա համար, որովհետեւ մեզ քաջ յայտնի է թէ այդ գործը մի խումբ գրող մարդկանց գործ է, որոնք հայոց ժողովուրդի տառապեալ վիճակից չարաչար օգտուելով, ժամանակն հասած են համարում տիրանալ հայոց եկեղեցուն եւ նրա հետ կապուած հաստատութիւններին այս ուղիով, սարսափի, ընդհանուր վհատութեան միջոցին, եւ ծառայեցնել իրենց ընկերութեան շահերին, եկեղեցին, նրա հետ կապուած հաստատութիւնները, այլ եւ կաթողիկոսին եւ

կաթողիկոսական հեղինակութիւնը:
«Չէ՛, այդ կոնդակները իրենց մէջ
ամփոփում են «սահմանադրութիւն»ով
ամենեւին հայրապետական կոնդակներ
չեն:

«Եւ այդ նրա համար որովհետեւ այդ
կոնդակները իրենց բովանդակութեամբ
լի հակասութիւններով խախտում
են հայոց եկեղեցու հիմքը:

«Եկեղեցուց դուրս ձգուած հոգեւո-
րակներ թիւնր. կաթողիկոսը ներկա-
յացրում է իրեն թշնամի հոգեւորա-
կանութեան կաթողիկոսական իրաւ-
ունքները ոչնչացրած են, եկեղեցին
յանձնուած է մի խումբ մարդկանց,
որոնք իրենց յեղափոխական են անու-
անում եւ իրենց համոզմունքներով,
իրենց վարդապետութեամբ եւ գործն-
քով դէմ են հայոց եկեղեցու քրիստո-
նէական վարդապետութեան օրէնքնե-
րին: Ինքը կաթողիկոսը հանդէս է
բերում ապագայի մի «նոր եկեղե-
ցու» իրեն ինքնուրու առանց պօրտ
ֆէյլի...»

«Այդ կոնդակները, ինչպէս տեսանք
ոչ թէ չեն վերականգնում հայոց եկե-
ղեցու խանդավառ իրաւունքը եւ շնոր-
հում ազգին «սահմանադրութիւն», այլ
հայոց եկեղեցին եւ ազգութիւնը կլա-
նելու պատրաստ չար ոգիները ապա-
րէզ են հրաւիրում գործելու, խռովում
են ժողովուրդը եւ ոտի տակ են ձգում
հայոց եկեղեցու սահմանադրութիւնը:

«Եւ այն է, շատ ծանր է մեր ազգի
դրութիւնը: Մինչեւ օրս կուտւում էինք
մեր ազգի եւ եկեղեցու դրսի թշնա-
միների դէմ, այսուհետեւ պէտք է կոտ-
ւենք եւ ներսի թշնամիների դէմ:

«Եւստ կարելի է, որ էջմիածնում գո-
ւարւած ժողովը զգուշութիւնից այս
անգամ միմիայն դպրոցական խնդիրնե-
րով զբաղուի եւ գուցէ լաւ գործ էլ
կատարի, բայց մենք չպէտք է խառ-
ւենք. ապօրինի ճանապարհով, փաշտով,
կեղծիքով ձեռք բերած լաւ բանն էլ
ընդունելի չէ եւ այդ լաւը չափանք
է նստելու: Լաւ գիտենք, որ այդ կազ-
մակերպութեամբ ժողովը իւր տեղումը
պնդանալուց յետոյ վայր կը ձգի իւր
երեսի դիմակը:

«Ինչպէս էլ գործելու լինի յիշեալ ժո-
ղովը՝ մենք չենք ճանաչում նրան, ո-
րովհետեւ ապօրինի է, որովհետեւ դէմ
է մեր եկեղեցու կանոններին եւ հոգ-
ւոյն:

«Մենք բողոքում ենք եւ մեզ հետ կը
միանան անշուշտ նրանք ամենքը, որոնց
համար թանգ է Հայոց ազգի խաղաղ
զարգացումը, նրա հազար տարիների
եկեղեցու գոյութիւնը եւ ազգի ապա-
գան:

«Բոլոր հոգեւորականները պէտք է
ոտքի կանգնեն եւ իրենց ծուխի հետ
բողոքեն անօրինակ բռնութեան եւ
ոտնձգութեան դէմ, եթէ քանից միտ-
քը խաւարած չէ կղերականութեամբ, եւ
իրենց դասակարգի շահից բարձր են
դասում Հայաստանեայց առաքելական
եկեղեցու գոյութիւնը եւ պայծառու-
թիւնը:

«Հայեր, ինչ էք քնի, վեր կացէք
տեսէք, ս. էջմիածինը Մայր Աթոռում
եւ կաթողիկոսով յեղափոխութեան
ձեռքն է անցել:»

Ս. Ս.

Այդ եւս ասոր մոտ իմաստներով
խմբագրականներ գրած են նաեւ Մշա-
կը, Մզրնը, Բ. բոլոր կողմասահայ
թերթերը, բացի զաշխակական օսկան
ներէն:

Նուիրակ հայր սուրբ որչափ որ կող-
կատակայ մատաղին գրածներուն հակա-
ռակ այդ երեք կոնդակները ու կեար,
ժողովը կը պաշտպանէ միեւնոյն ա-
տեն: Կը խոստովանի թէ փոխադրու-
ած առաջին ճանապարհով ապա, մզք

«... ամեն ինչով ինչպէս լինի, մզք
«... ամեն ինչով ինչպէս լինի, մզք

ճանքով եւ ապագայի երեւակայու-
թեամբ ներկան վտանգող որոշումնե-
րով ու ծայրահեղութիւններով պատ-
գամաւորները պատճառ տուն որ կա-
ռավարութիւնը փութայ արգելիլ ու
ցրուիլ ժողովը:

ՊՈԼԿԱՐԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Բացատրումով ըլլալով թէ Տէր
Տաճատ վարդապետ Պաւկարա-
հայոց առաջնորդական փիճակը
կազմակերպելու պաշտօնով զրկու-
ած է Վեհ. կաթողիկոսէն՝ եղած
գիւմուսին համաձայն. թերթիս
խմբագիրը խօսք առնելով խո-
րին շնորհակալութիւն եւ երախ-
տագիտութիւն յայտնեց Ամենայն
Հայոց Հայրապետին ի գիւմաց
Վառնայի հայրութեան և յանուն
բոլոր պուկարահայ գաղթական-
ութեան, թէ նորին Ս. Օծու-
թիւնը բարեհաճած է լսել իր
հեռաւոր հօտին թախանձանքը՝
զայն ազատելու համար բռնակալ
ռէժիմէ մը ճնշուած Պոլսոյ Պատ-
րիարքարանի ուղղակի ազդեցու-
թենէն, որ անկարող գտնուած է
ցարգ Պաւկարահայութեան ա-
ռաջնորդական կազմակերպու-
թիւն մը տալու և բանիբուն ա-
ռաջնորդով մը օժտելու, հակառակ
ժողովուրդին կողմէ բազմիցս
յայտնուած բուն բաճանքին և
զոհողութիւններ ընելու տրա-
մադրութեան:

Առաջնորդական խնդրոյ մա-
սին թաղ. Խորհուրդը ժողովուր-
դը խորհրդակցութեան հրաւի-
րած ըլլալով, ժողովի նախագա-
հութիւնը յանձնուեցաւ Տէր Տա-
ճատ վարդապետին:

Նախագահ ս. հօր բացատրու-
թիւններէն անմիջապէս յետոյ
թերթիս խմբագիրը իրեն հիմ
առնելով կոնդակի ի նկատի առ-
եալ միայն զտեղական պայման-
սընդ խօսքը բացատրութիւններ
տուաւ Պաւկարիոյ մէջ այսօր
հպատակ ազգերու փափուկ կա-
ցութեան մասին. մատնանշեց
Յունաց առաջնորդական խնդիրը
իր պատճառներով և հետեւեալը
ներով, թուեց ազդակից ընտ-
րական պայքարներէ ծագելիք
գժուարութիւններ, որոնք կրնան
սկսուելիք գործը վտանգել իսկ,
բաւ և առաջարկեց խաղաղ ու
կարճ միջոց մը բուն նպատակին
հասնելու համար առանց ալմու-
կի: Այդ միջոցն է երեք տարի
առաջ Վահան վարդապետի օրով
ընտրուած պատգամաւորները
հրաւիրել և անոնց կատարել
տալ առաջնորդի մը ընտրու-
թիւնը և յարակից տնօրինու-
թիւնները:

Այս առաջարկը կարգ մը խօ-
սողներու կողմէ մերժուեցաւ, ո-
մանց կողմէ բանաւոր տեսնուե-
ցաւ, միշտ նկատի առնելով ազ-
մուկներէ առաջ գալիք վտանգը:
Բայց շատեր կանխատեսուած
վաճաճը անհաւանական համարե-
լով նորընտրութիւններ կատարե-

լու պահանջը շեշտեցին: Նուիրակ
հայր սուրբը թերթիս խմբագ-
րին նկատումները շատ լուրջ և
հասուն գտնելով հանգերձ, իր
ձեռք ունեցած կոնդակով բաւ
Ռուսահայոց սահմանադրութեան
ընտրութիւն կատարելու պաշ-
տօն առնելու ջոյց տալով, աւե-
լի համաձայն գտնուեցաւ նոր
պատգամաւորներու ընտրութիւն
կատարելու պահանջին:

Առնչ կարգ մըն ալ թերթ ու
դէմ կարծիքներ փոխանակուելէ
վերջ, հետեւեալները իւր ժողո-
վին սնոցումները արձանագրուե-
ցան:

Որոշումներ

Ա.) Առաջնորդական ընտրու-
թիւն կատարելու համար հրաւի-
րել պատգ. ժողով բոլոր հայրա-
պետական կոնդակի: (Եւ առ-
նել անդ առաջնորդական ընտ-
րութիւն ի ձեռն պատուիրակաց
համայն գաղութի այնորիկ, բոլոր
եկեղեցական սահմանադրութեան
մերում, զոր տուաք Ռուսահայոց,
ի նկատի առնելով զտեղական պայ-
մանսն):

Բ.) Ռուսահայոց սահմանադ-
րական հրահանգները հրատա-
րակել տեղական հայ լրագրաց
միջոցաւ ի գիտութիւն և ի բրն-
նագատութիւն:

Գ.) Նոր պատգամաւորները
ընտրելու համար մասնակցու-
թեամբ թաղ. Խորհրդոյ և կա-
րող ազգայնոց՝ նուիրակ հայր
սուրբը պէտք է ընտրական հրա-
հանգներու նախագիծ մը պատ-
րաստէ, նկատի առնելով նախորդ
պատգամաւորաց արձանագրու-
թիւնները և ընտրական հրա-
հանգները, նաեւ աչքի առչել ու-
նենալով իշխանութեան սահմա-
նագրութեան ընտրութիւններու
վերաբերեալ յօդուածները, Այս
նախագիծը պատրաստուելէ յե-
տոյ, Վառնայի թաղ. Խորհուրդը
զայն զրկէ քոյր Թաշկանու
թեանց որպէսզի ասանք ալ տե-
ղական ժողովուրդին կարծիքը
առնեն և հաղորդեն իրենց գի-
տողութիւնները: Այդ ամենը
ստանալէ յետոյ, նուիրակ հայր
սուրբը պէտք է զանոնք նկատու-
ղութեան առնելով պատրաստէ
իր շրջաբերականը ընտրու-
թեանց վերջնական հրահանգնե-
րու մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՍ-
ՅԵՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

(Պաշտօնական ղոկումներ)

«Դրօշակ» ի խմբագրութիւնը, յա-
նուն Հ. Յ. Դաշակեցութեան, ուղար-
կեց Յրանայի, Անգլիայի, Իտալիայի
եւ Միացեալ-Նահանգների արտաքին
գործերի մինիստրութիւններին մի գի-
մուկ հայկական խնդիրը Հանէյի ժո-

ղովին ներկայացնելու համար: Այդ դի-
մումն կցւած էր մի գօսութիւն, ուր
ցուցակագրւած են թուրքաց հայաս-
տանում կատարւած բռնութիւնները,
1906-ի առաջին վեցամեակին: Յրան-
ստիան արտաքին գործերի մինիստր
Լէօն Բուրժուային ուղղած պաշտա-
նագ. ներկայացնելու յանձն առան մեր
բարեկամ Յր. զր. Պրէստանէ եւ Պրէք
Բիլար: Ահա այդ թղթի կտրուածու-
թիւնը:

Պ ա ռ ո յ ը մ ի ն ի ս տ ր

Երեք տարի առաջ՝ Ֆրանսա-
կան արտաքին գործերու մի-
նիստին գիմուկ՝ ըրած էինք
Մշոյ շրջանը արիւնտաղ դէպ-
քերու վերաբերմամբ, և ուրախ
ենք բնելու որ մեր այս քայլը
թեթեւ արդիւնք մը տուած էր:

Անկէ իվել, և հակառակ ամեն
տեսակ խոստումներու, թերթաց
Հայաստանի մէջ կացութիւնը
աւելի ևս անտանելի դարձած է:
Իրերու այս վիճակը մեզ ստիպեց
գիմուկ միջպաշտօնական ճո-
ղովին, գումարւած Լօնգօն յուլիս
ամսին և, շնորհիւ Յրանայի,
Բիլգիայի և Միացեալ-Նահանգ-
ներու հայասէր պատգամաւորնե-
րու միջամտութեան, խորհրդա-
ժողովը միաձայն ընդունեց որո-
շում մը — պահանջել Հանէյի
Կօնգրէէն, որ ստիպէ թերթիւն
տալու հայերուն, համաձայն մի-
ջազգային սրտումներու և մաս-
նաւորապէս Բիլգիայի Դաշակի
այն իրաւունքները, որոնք հան-
գիստաւորապէս երաշխաւորւած
էին:

Այսօր երբ արտաքին գործե-
րու մինիստրութեան գլուխը կը
գտնուի անձեւաւորութիւն մը, ո-
րու մարդասիրական միտքը ծա-
նօթ են և ոչ Հանէյի Խորհրդաժո-
ղովին սկզբնապատճառներէն մին
եղաւ, կարծենք թէ մեր պար-
տականութիւնն է գիմուկ իրեն և
դնել մինիստրութեան առաջ մեր
իրաւունքներու կարգադրու-
թեան հարցը:

1895—1896-ի կոտորածները
շարունակելու անկարողութեան
առջև՝ թերթ կառավարութիւնը
զինք հարկադրւած տեսաւ իր
քաղաքականութեան ուրիշ ձև մը
տալ: Այնտեղ, ուր հայ ազգա-
բնակչութիւնը ուժեղ է, կը ջա-
նայ զայն անսորապիւր և քիւրդ-
չէրքէզ և ուրիշ մահմետական
յեզիդ տեղաւորեր, Այս է պատ-
ճառը այն խառն արտագաղ-
թին, որ ներկայիս կ'արտայայտ-
ւի վանի, էրզրումի և Դիարբե-
քիւրի վիլայէթներու մէջ:

Անլուր հարկեր, հալածանք
տեղական վարչութիւններու կող-
մէն, շարունակական խուզարկու-
թիւններ ամբողջ երկրի քաղաք-
ներու և մինչև իսկ գիւղերու
մէջ, մէկ նահանգէն միւսը ճամ-
բորդելու արգելք՝ հաւաքական
բանտարկութիւններ, մատաւրա-
կաններու դէմ ձեռք առնուած ա-
մենախիստ միջոցներ, որոշ վի-
ճակի տէր ընտանիքներու սիս-

տե՛մատիք կործանումն, եկեղեցական, դպրոցական և դատական գործերու մէջ հայ համայնքներու տարրական իրաւունքներու ոչնչացումն և վերջապէս երկրի ամենախուլ անկեղծներու մէջ մասնակի ջարդեր:—այս ամենը աչքի առաջ ունի միեւնոյն նպատակը՝ հայկական նահանգներու մէջ տկարացնել հայ ազգաբնակչութիւնը, — միակ միջոցը, Սուլթանի կառավարութեան հայեցակետով, վերջ տալու հայկական հարցին:

Հոս շատ երկար պիտի ըլլար թիւքրաց հայաստանի կացութեան ամբողջ պատկերը տալ բայց թոյլ պիտի առնեմ մեզի պարոն միւնիստր, ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն դէպքերու վրայ, որոնց ճշգրտութիւնը անխտրելի է, որովհետեւ անոնք վերատուգում են մեր կուսակցութեան տեղական կոմիտէներու կողմէն, — կոմիտէներ, որոնք երկրի մէջ 16 տարիներէ ի վեր կը գործեն և բացարձակօրէն ի վիճակի են անցած դէպքերը ստուգելու:

Ասոր կը կցենք գ. օ ս ս ի մ ր ցայտուն իրողութիւններու, որոնք առաջացած են ներկայ 1906 տարւան առաջին վեց ամիսներու մէջ: Անհրաքելի կերպով անոնք ցոյց կուտան թէ վճռական քայլ մը պէտք է առնել և թէ աշտակող անարդարութիւն պիտի ըլլար ձգել այս դժբաղդ երկիրը ներկայ վիճակին մէջ:

Կը կարծենք, որ եւրոպայի պետութիւններու մեջամտութիւնը ազդու միջոց մը պիտի ըլլար մէկ կողմէն կանխելու ոչնչացումը խաղաղ ժողովուրդի մը, որ միմիայն աշխատելու և ապրելու

իրաւունքը կը պահանջէ, իսկ միւս կողմէն վերջ տալու համար յեղափոխական գործունէութեան որուն մեր կազմակերպութիւնը բռնադատուած կը տեսնէ զինք՝ Բերլինի Դաշնագիրը ստորագրող պետութիւններու անտարբերութեան և հայ ժողովուրդի վերաբերմամբ ի գործ դրած անորակելի արարքներու պատպառածութիւնը:

Լաւ գիտէք, պարոն միւնիստր, որ հայ ժողովուրդի պահանջները խոստացած բարենորոգումներու գործադրութեան համար՝ ոչ մի դժարութիւն չեն ստեղծեր, որովհետեւ Օսմանեան կայսրութեան անդամատուութիւնը և ոչ ուր իրեն յատուկ իրաւունքներու շնորհումը չէ որ կը պահանջէ մեր ժողովուրդը, այլ հայկական նահանգներու բոլոր ազգաբնակչութեան համար, թէ քրիստոնեայ և թէ մահմետական, հաւասար տարրական իրաւունքներ ունենալու իրաւունքներ ունենալու մը, այլ ամբողջ երկրի ընդհանուր բարենորոգումներ, դաշնակցութիւն մը, ուր բոլոր ցեղերը պիտի ունենան իրաւունքի և պարտականութեան հաւասարութիւն:

Մենք մեզ պարտաւորուած կը տեսնենք, ի մեծ ցաւ մեզի, մէկ կողմ թողնել Հայաստանի միւս կողմ մասի — կովկասի այրող հարցը, ուր այժմ երկու դրացի ազգերու միջև մեծ տրամ մը կը խաղացել շնորհիւ ռուս կառավարութեան ստեղծած քաղաքականութեան, քանի որ այս հարցը Ռուսիոյ ներքին գործ կը համարուի, բայց թիւքրիոյ հայերու հարցի միջազգային բնուրութիւնը մեզ կ'արտօնէ կարծելու, որ մեր ժողովուրդի պահանջները կը հիմնուին ոչ միայն

մարդկութեան և արդարութեան գաղափարներու, այլ և միջազգային իրաւունքներու վրայ:

Հիայոյս ենք, որ Ֆրանսական հանրապետութեան ներկայ կառավարութիւնը՝ հիմնելով Բերլինի Դաշնագրի և 1895 բարենորոգումներու ծրագրի վրայ, պիտի բարհաճի նախաձեռնարկ լինել Բեռլինի Դաշնագրութիւնը ստորագրող պետութիւնները համախմբելու և պաշտօնական ու որոշ եղանակաւ դնելու այդ հարցը Հանգչի դատարանի առջև, որ չուտով պիտի գումարուի, և կամ մի այլ յարմար դատած որեւէ կերպով ստիպելու սուլթանի կառավարութիւնը՝ տալ մեր դժբաղդ երկրին 28 տարիներէ ի վեր խոստացած արդարութիւնն ու իրաւունքը:

(Ստուագրութիւն)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնայ միարաններէն Տէր Գրիգորիս արքեպ. Գառնակերեան սեպտ. 14ին Յաֆայէ Աղէքսանտրիա հասած է և ազգային շրջանակէն փառաւոր ընդունելութիւն վայելած: Ն. սրբազանութիւնը վեհ. կաթողիկոսէն և երուսաղեմայ պատրիարքէն ողջունելու հաղորդեց եզրպատահողը:

— Պագուրի ոստիկանութիւնը կամարատանէ հայերը թէ Դաշնակցութեան տեղական գոմիթէն սպառնական նամակներ զրկած է մէկ քանի սպաններու: Տփլիսէն Պագուրի գրկուած է լիազոր զինուորական պաշտօնայ մը ամենազաւոր յանձնարարականով խուզարկութիւններ և ձերբակալութիւններ ընելու: Նոյն պաշտօնական միացած տեղւոյն ոստիկանութիւն ճիւղաբեր է փոխարքային թէ սգործադուր ռազմապետներ հայերն են, որոնք գրգռուած կ'անար. ժողովը փակուելէն մտադիր են ապստամբական ցոյցեր ընել: Դաշնակցութեան զինուած խումբերը

աշխատեցան փողոցներու մէջ ընդհանուր մահի րեւել զօրքի հետ, սակայն շնորհիւ ձեռք առնուած միջոցներու գարծաղուի օրը խաղաղ անցաւ: Դրոշակի տեղեկատու կը կարծէ թէ կառավարութիւնը այս սուտ լուրերը յօրինելով կը ցանայ պատուակ ստեղծել կոտորածներու միջոցաւ «յեղափոխական նոր փորձերը արեան մեջ խղիւղու համար»:

Մենք կը ցաւինք խոստովանուած յեղափոխական այդ նոր փորձերու համար, որոնք միայն հայ արեւն թափելու պիտի ծառայեն և թաթարներու առթիւ պիտի ընծային անգամ մըն ալ հայոց դէմ չղկայազնեղութիւն:

Նւ տեսէք ինչ կաւելցնէ հայ լրատուը Դրոշակի մէջ:

«Յեղափոխական կարիւսը կազմապարպութիւնները տեղեկ են այդ դժոխային ծրագրերին և զորանց հեղինակը՝ Սողիպին (նախարարապետը) պատասխանատուութեան կը կանչուի ոչ թէ Դաշնայի, այլ Ռուսիա առջև:

— Եզրպատահող նոր կազմուած Ուսումնասէր Արմենուհեաց Սանգուխտ ընկերութիւնը իր առաջին ընդհանուր գումարելով տիկին Մարի պէյ-լէրեանի նախագահութեամբ, ընտրած է իր Գործ-Ժողովը:

— Եզրպատահող թերթեր կը տեղեկանանք թէ գերտան Պէնլիանի խումբը բաւական համակրութիւն գտած է Եզրպատահող մէջ: Արդեօք սկսած լուրջ խաղեր տեղեկացնել, թէ առջին մեզ ծանօթ իսկիշական խաղերով և իր աշխատակից օրիորդներով միայն համակրանք կը գրաւէ:

— Տ. Յ. Ճանկիւլեան մեզ խոստացաւ թէ մէկ շաբաթէն պիտի հրաւիրեն Որբախնամի ընդհ. ժողովը: Այս հաստատ խոստման վրայ աւելորդ դատեցինք հրատարակել ժողովին յապաղման դէմ բողոքող գրութիւնը գործաանցած էինք մէր նախորդ թուով:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿՈՒՋԷՔ ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԾԻԱԽՈՏ ԾԻԱԽԼ. ԽՆԴՐԵՑԷՔ ԱՄԵՆ ՏԵՂ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԻ ԾԻԱԽՈՏ ԳԼԱՆԻՆԵՐԸ:

Արտակարգ քննիչ մեկած էր ու յատուկ պաշտօն ունէր թալանի չարագործները պատժելու և կողոպտուած ինչքերը վերստին հայերուն վերադարձնելու:

— Հըր'մ... մըմնջեց ինքնիրեն ձանձար պէկ, գարձեալ նինգաւթալ գաւմընէ աօիկա... Չեմ կրնար հաւատալ թէ կառավարութիւնը փոխած է իր սեւ շապիկը... որովհետեւ զեւ երկ էր որ Մլանցիներու, Շամսկիներու, Մուկուրցիներու, Լուիցիներու և բոլոր քուրա Սչերէթներու պետութեան պատուանշաններ բաժնեցան, իրք վարձատրութիւն այն սարսափիկ չարագործութեանց գորս անխղճօրէն կատարած էին անոնք: Հիմա'ի... օ'հ, քննիչ մը կուգայ ու կը պատժէ: Ո'չ ո'չ, ուղղակի կոտորածներու ծրագրեր պիտի քննուի... ահա բոլորը Տեանի'նք, իհարկէ պիտի յայտնուի ամեն բան:

Ձանձար պէկ սպասեց: Գիտէր թէ այդ Արտակարգ քննիչը պիտի գար իր ոտքը:

(Շարունակելի)

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

18

ՍԻՍՏԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՃԱՋԱՄՐ-ՊԵՆ

(Շար. նախորդ թիւէն)

- Ինչպէ՞ս կարի չըլլար...
- Որովհետեւ հայերը ո'չ միայն զէնք չ'ունին, այլ իրենց մարմինը ծածկելու շապիկէն անդամ գործի են:
- Իրա'ւ է՝ բայց պատրաստուած ուժը ներքէն չ'է:
- Հապա՞:
- Ինչուստանէն:
- Ռոսաստանէն:
- Այո՞:
- Անհաւատալի բան:
- Ինչու համար:
- Անոր համար որ Ռոսաստանէն եկած ուժը չը կրնար սահմանէն անդամ անցնիլ: Վաշտ մը կանոնաւոր

զինուոր, քանի մը թնդանոթ... ահա՛ վերջացաւ: Անոնց ձայնը հոն պիտի մնայ ու երկրին խաղաղութիւնը չը խռովուի:

— Լա'ւ, բայց միեւնոյն տեսնի՛ թէ՛ Արճէյու կողմ, թէ՛ Բալալու մէջ և թէ՛ Թիմարայ քանի մը հայաբնակ գեղերը լիցուած են եղեր գոմիթաճիւններով... առոնք չ'ունին կրնար վտանգաւոր ըլլալ:

— Ըստ իս քանի մը զինուած մարզիկ՝ անօթի ու թշուա ժողովուրդի մը մէջ ապստամբելով, երբէք կարող չ'են գործ մը տեսնելու: Կառավարութիւնը թնդանոթ ունի, մեք ալ զէնք ունինք, ինչէն պիտի կասկածինք:

— Ուրեմն, երբ հարկ պահանջէ, ձեր աջակցութիւնը կը խոստանա՞ք:

— Անշուշտ:

Վալի փայտն չունէ մ'առաւ ու ներքին ուր խռովիւն մը զգաց: Վերջապէս յաջողած էր Շաւեցիներու մեծանուն պետը համոզել, որ ամենայն սիրով իր զէնքը կը խոստանար կառավարութեան:

— Ունի՞ք բաւական թուով նոր զէնքեր, հարցուց Վալին:

— Ունինք... բայց եթէ երկու հա-

Ապօնէլէրիմիզէ պօրճա-
րընը կէօնտէրմէլէրի րէճա
օլունուրիֆէօլէրտէ օլանլար Տօպ-
րիչաէ Մ. Սիսակեանա վէ Սի-
լիստրէտէ Մ. Արթաքի Սարգիս-
եանա էօտէլէ պիլիւրլէր :

ԹԻԻՐԻՔ ԿԱԶԷԹԱԼԱՐԸ

Կէջէն Ռուսիա մուհարէպէսի
վէսիլէսի իլէ ադա օլունան 1878
մուհէտէսի թարիխիտէն պէ-
րու, մէմալիքի շահանէտէ հալը
ասայիչ պաշտան պաշա պօղու-
մուչ օլուպ, մուհիպի թէ՛էսիւֆ
պիւր հալտէտիւրվէ էլան թէրադ-
գըլաթը հազըրէլէ ասլա տըգգաթ
պուլըրլմատկտան պաշքա, էէէմ-
միլիէթ պիլէ վիլիլմէմէկտէ
տիւր թէրագգըլաթը ալէմ (յա-
ռաշգիմուլիւն) տէտիկիմիլ չէյ,
հէր քէս պիւր տիկէրիւնի րասթ
կէլտիկի մահալտէ թառագլամագ
վէ սօյմագ տէմէկ անլաշըլմասըն
իլլա իպտիտա Մէքթէպ, սանիէն
Սանաթ, վէ սալիսէն էնվայի
թիւճճարիլէ քէսթիլի իլէ վի-
ճուտէ կէլիւր պիւր քէյֆիլիէթ
տիւր ձէնապը ֆէյեալը քիպրի-
յատէն վագթի իլէ սօղուգ վէ սը-
ճագ, լաղըմ օլտըղը էսնատէտէ
եաղմուր կէլիւր, վէ լաքին ալթուն
իլէ կիւմիւլ կէլմէլ (էքտին իսէ
պիլլէրսին, եօք իսէ նէ՛լստէրսին)
մէմալիթի սաիլէտէ էօյլէ եէրլէր
վարքի, պիլթթապիլ էմրի զը-
րաթ իլէ մէշըուլ օլամայըպ
քիմիսի սանաթ վէ քիմիսի
թիւճճարիլէ իլէ մէշկուլ օլուպ
քէնտի թէյայիլչիլիւնի սուհու-
լէթ իւզրի պէճէրէպիլտիկտէն
մահտա, տըշարըլատէ պիլիմ կի-
պի աշկըն թաշկըն միլեօնլար ի-
լէ պօրճարը եօգ տըր, պէօյլէ-
լէրիտէն պարի իպրէթ ալընսա
օլմագմը :

61 նումէրալը նուսիստէ, տէվ-
լէթին քէտէրլէրէ ուղրատըղընա
սէպէպլէրտէն պիլիտէ «թէպա-
անըն էմիլիլէթլէրինէ քէֆա-
լէթ իտէճէկ էսպապըն եավաշ
եավաշ տիւլմէսինտէն իլէրի կէլ-
միշ տիւր տէյու աղ իթմիշ ի-
տիկ էվլէթ հէր գէս կէրէկ զէն-
կին վէ կէրէկ զիւլիւրտ օլսըն,
պու մէմալիքտէ եալընը քէնտի
իտարէսինէ քըտար գապիլ օլա-
պիլտիկի մէրթէպէ խըրսըկ կիպի
չալընըպ հէր ան վէ հէր սաթ
այալ վէ էվլատընըն մուհաֆա-
զասընը քէնտուսինէ իշ էթմիշ-
տիւր իմտի, պու հալտէ հէր քէ-
սին հալի վէ հայաթը պիւր թէհ-
լիքէյի աղիմէ իլիստէ պուլըն-
տըկընտան տօլայը իսլահաթը
միւսթէլլէմ պէքլէմէկ իսթաթմը
իմիշ Պապը Ալլէ արգուհալ-
լար վէրէրէք Բաթրիլլէր վա-
սիթասը իլէ Բատիլահա եալվա-
ըպ նիյաղլար էյլէմէկ գապա-
հաթմը իմիշ աճագ օ՛րիճալ
հաղըթլէրի, իսլահաթտան սար-

ֆը նազար իտուպ տէ պիչարէ է-
հալիլի տէօլլէթէ իսային տտո
իթտիլմէկ իլիւն տահա պիւր
նէյէլէտէք գէօրիւրմիւլ ինսան
տալլալարը կիպի պիւր պիլլէրի
իւթինէ քալտըրըպ չարըրչա-
րաճագլար, նօգթէյի նէզաքէթ
վէ ինսանիլէթ իզթիլլասընճա
քէնտուլէրինէ ասլա եաքըլահայն
պու ուլլուսըղ հարաքէթլէրինի
պի հուզուր օլմայուպ նաթըլ
հազմ իտիյօրլար Պու չիւքիլի-
կի էլան արթըրմայա չալըլան
պաղը թիւրք կաղէթաճըլար հէմ
մէտէնիլէթ վէ հէմտէ մէսլէք-
լէրինէ խըյանէթ իթմիշ քլմա-
յօրլար մը :

Պ. Կ.

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹՈՒՐԻՔԻԱ

Նէճիպ Մէլհամէ բաշա Սիւան-
պօլա ալտէթիւնտէ Սուլթանա
վէրտիկի րաքօրթ իլէ վէ իսանէն
Պուլկարիա հագգընտա սիւքիւ-
նէթլի մալիւմաթլար վէրմիշ
տիւր Եանի բաշաի մէրգում Սօ-
ֆիատան կէչմէսի վէ ալտէթի էս-
նատէ պուլկար միւնիսթէրլէր ի-
լէ վէ քնզա Բրէնսլէ միւլագաթ-
լարընտա՝ Պուլկարիանըն թիւր-
քիայա գարչը մուհարէպէյէ մէյ
իլլի օլմատըղընա գանիւր տըր,
թիւրքլէր էն զիյատէ ասքէր
մանէվրալարը էսնասնտա հիւ-
ճուտան գօրգմագտա ըտըլար
չիմտի մանէվրալար տախի պիլթ-
միշ օլմալլէ օ՛ չիւքէլէրի իզալէ
օլունտու :

— Պու սօն գըրուգալլ սէպէպի
իլէ պուլկար — թիւրք թիւրքէթ
ահտանմէսի իլիւն միւլգէքէրէտէ
պուլընան գօմիսիօն պուլկար ա-
զալարը թէրքի մէշըուլիլէթ իթ-
միշլէր իտի, չու կիւնիլէրտէ թէք-
րար իշէ պաշլամըլա, վէ էէէմ-
միլլէթլի նօգթալարտա իթիլաֆ
հասըլ օլմագտա ըմըլ :

— Մանէլստըր կարտիէն նալ ին-
կիլիլ կաղէթասընըն Սթանպօլ
մուլպիւրի տախի տլման թա-
պիլլէրին րաքօրթը իւզրէ Սուլ-
թանըն պիւր գաշ այլըք էմրիւ
գալմըլ օլտըղընը թառտիգ իտէ-
յօր, Պու սէպէպլէ երլտըղ րէճա-
լը Սուլթան Համիտին վէֆաթըն-
տա քէնտիլէրինէ եօլ կէօրիւն-
մէսինտէն գօրգարագ Պիւրհա-
նէտտին էֆէնտիլին (Համիտին
իւլիւնճիւ մալտուլմը) թախթա
օթումասընը թէէմին իթմէք
իլիւն Սուլթանտան վէ Շէյիլիւ-
իսլամտան իրատէ վէ ֆէթվա
ալմագ իլիւն չալըլմագտա ըմըլ-
լար Շու սըրա Սուլթան Ալի-
զին մալտուլմը Մէճիտ էֆէնտի
իլիւն տախի սէօյլէնիլիյօր, պու
զաթ Ֆրանսըղ թէրպիլէսի ալ-
մըլ 37 հալընտա, զէքի վէ սէր-
պէստիլլէթէ մէյիլլի իմիշ, եըլ-

տըղ հայտուտարը Մէճիտ էֆէնտին
տախի ալէյհիւնտէ պուլունու-
յօրլար :

ՏԱԽԻԼԻԷ

Ֆէլսաֆ Բրէնա հազրէթլէրի
վալիտեսի վէ հէմիլիէսի բէնսէս
հազաթը իլէ յազար սապահը
չէհիմիլ գուպիլնտէքի էվքսի-
նօկատ սէրայընա թէշ իֆ պու-
յուլ տըլար :

— Շիմտիլիք Ռուլարա խուսու-
մէթքեար օլան Ռատուպէցլէր
բաղար կիւնիւ շէհրիմիլտէ քեա-
ին բուլմ քիլիսէ վէ մէքթէպլէ-
րինի զապթ ու իշղալ իթտիլէր
իսէտէ, գօնսօլալար վէ պաղը
րուլար թա աֆընտ ֆէլս, Բը-
րէնսէ օլան միւրաճաթ իւզէ-
րինէ՝ տէրհալ գուլվէի աղքէիլլէ
կիսթէրիլի իլէ քիլիսէլէր կէրի
վէրիլտի վէ Ռատուպէցլէտէն
չօգլարը տէրտէսթլէ թէվգըֆ օ-
լունտուլար, Տախիլիլէ նաղըլ Մ.
Բէթքուլտան ալընան էմիլ իւզրէ
անլէէ գարչը թառագիպթ տէ-
վաթ իտէճէք վէ թէճալիւղաթա
րօհպէր օլտըլար թահթը մու-
հաքէմէյէ ալընաճագլար :

Բաղար կիւնքի վագաանըն
թաֆիսիլաթը ճուլա էրթէսի կիւն-
քի նուսիսթիլլին էրմէնիճէ գըս-
մընտա միւնտէրիճ օլաճաք :

— Վարնա պէլէտիլլէսինին
թիւրքիլլը կէնճիլլին տսքէլի-
կի իլիւն իւլընտա՝ սէհվիլաթ
օլտըլը թառտիգ օլունտու Սօֆիա-
տան վէրիլլէն տսըլ էմիլնամէ
եալընիլլ թապալըղընը իսպաթ
իտիլի էվգալար էլլէրիլտէ օլմա-
յն կէնճիլլին տսքէր գալյո ի-
տիլլէրիլլի թալէպ իտէյօր էօյ-
լէրի էլէրիլտէ բասաքօրթ վէ
եալիտ իգամէթ թէլքէրէսի օ-

լանլար մէճպուր տէյիլ տիլլէր,
Քէզա էլլէրիլտէ էսկի բասաքօր-
թը, եա պիլ էսկի իգամէթ թէլք-
քէմէսի օլանլար տսքէրլիք գօր-
գուսը իլէ 10 ֆրանգա պէտէլ եէ-
նի իգամէթ թէլքէրէսի ալմա-
սընլար զիւր էսկիսի տախի էվլէ-
րիլլ 10 ֆրանգա եաղըք իտէրլէր :

ՐՈՒՍԻԱ

Ձար վէ Ձարճա սէյահաթտան
ալտէթլէ Բէթէրհոլ սէյայընա
կիլթիլլէր, եաղընտա Ձարսքօէ
սէլօյա կիտէճէքլէր իմիշ :

— Ռուս մալիլլէ նաղըրը Մ. Գօ-
քօլչէվ հիւքիւմէթին պու սէնէ-
քի ահվալի մալիլլէսինին բա-
քօրթընը վիւքէլա րէյիսի Մ.
Սթօլիլիլլէ թագտիլլէ, 1906 սէ-
նէնին յունվարտան սեպտեմբե-
րէ գատար 95 միլիոն րուպլի
աշըգ օլտըղընը վէ սէնէ խիթա-
մընա գատար պու աշըգ 115 մի-
լիոն պալիլ օլաճաղընը կէօս-
թէմիլլ :

ԾԱԽԻԼԻ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » (433 էջ) 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՂ կամ ՄՐՄՈՒՆՋ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԳ անդամ տպագ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-
նէրու նիստ ու կացը ու թուրքիլլէ
կրած տառապանքը անոնց ազատու-
թենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻԹԻ ՋՈՋԵՐ Պատկեր
մը Տաճկահայաստանի իրական կեան-
քէն : Չեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիրք
ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ո Ւ Ն Ք» ի խմբագ-
րու թեան

Одговорникъ А. Курбетиянъ
печатница Д. Тодоровъ С-ко-Варна

OMEGA

ՅԱՆՈՐ ԹՕՍՊԸԸԸԸԸՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգո ժընէվի եւ Պուլքսէլիցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ
ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամա-
ցոյցի գօրծարանը «ՕՄԵԳԱ» իրօք իր անունը արդարացուցած է իբր ճարտա-
ւածութեամբ կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԳԱ ին հասցնող
համարութիւն մը :

Եւս հաշակաւոր Գործարանին ներկայացուցիլն է Տ. Յակոբ Թօսպըղզեանի վա-
ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԳԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ,
արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱԻՐ :

Կը գտնուին նաեւ Պուլկարիլլ բոլոր կարեւոր ակնավաճառներու ե ժամա-
գործներու քով :